

իրարու զօգուած անտեսանելի թելով մը՝ կարծես թէ միեւնոյն ձեռքը կը վարէ:

Երկու հատորներուն մէջ ալ քննադատական տեսութիւնները իրարու կը յաջորդեն հեւասպառ վազքի մը մէջ, մերթ ուղղադէպ և մերթ դարձդարձիկ, և յաճախ զօրաւոր սրունքներ ունենալու է կարենալ հետեւելու համար հեղինակին որ յերաւել շատ բաւ մարդած է ինքզինքը այս ճիւղին մէջ. ան ոչ միայն կը լուսաբանէ այլ նաեւ՝ կարծես կը թելադրէ. և այնպէս կը թուի թէ իր խորհրդածութիւններէն կրնան օգտուիլ ոչ միայն ընթերցողները, այլ իրենք իսկ արուեստագէտները՝ որոնց մասին կը խօսի Վիսցի (Աշրաֆեան):

Եթէ այս ընթացքով շարժի, հեղհեռէ աւելի ուռճանալով՝ Աշրաֆեան պիտի հանդիսանայ պատկերասրահի արուեստին ամենէն ուշագրաւ տեսարաններէն մին, մանաւանդ որ իր մշակած գեղանքը գրեթէ անկոխ է տակաւին: Եւ այս՝ պատիւ կը բերէ մեզի:

Կը հիշեմ Աշրաֆեանի վրայ. սակայն հիշումս աւելի մեծ պիտի ըլլար՝ եթէ նոյն ձեռնմասին, մանաւանդ հայ գրական գեմբերու: Արդէն այս ուղղութեամբ սկսած էր աշխատել, ասկէ տարիներ առաջ, ուշագրաւ յաջողութեամբ: Ծանօթացնել հայ հանձարներ Արեւմուտքին նոյնիսկ համեստօրէն. ահաւասիկ վսեմ գործ մը, որ տակաւին չէ կատարուած ըստ բաւականի: Հակառակը կատարուած է, և չքեղ կերպով: Ուրեմն կը մաղթենք Աշրաֆեանի՝ որ շարունակէ իր սկսած նախորդ գործը: Բաւոյական վարձք մը պիտի ունենայ այն ատեն, զոր կարելի չէ փոխարինել ուրիշ ո՛ր և է վարձքով:

ՀՐԱՉ ՔԱՋԱՐԵՆՅՑ



Etudes sur L'Art Médiéval en Géorgie et en Arménie. - Jurgis Baltrusaitis: Հրատ. Փարիզ, 1929, քառածալ, թղթակազմ, էջք 111, նկարք 179:

Իրաւ ուշացած է դրախտականա այս հատորի մասին, որուն նոր միայն ծանօթացայ եւ տիրացայ, սակայն այսպիսի ուշացումներ այսպանելի չեն մեր իրականութեան մէջ, երբ նկատի առնենք շատ այսպանելի թերացումը մեր մատենագրութեան մէջ նոր հրատարակութիւնները պարտ ու պատշաճ դրախտելու: Ոչ միայն դրախտողներ կը պակսին մեզի, այլ բացի երբեմն երեւցող պատահական դրախտականներէ, որոնք շատ անգամ աւելի քննադատական գործեր են, հայ կամ հայագիտական նոր հրատարակութեանց յարատեւ եւ կանոնաւոր ցանկերու հրատարակութիւնը չունինք, որուն դիմելով մեր մէջէն հետաքրքիրներ կարենան տեղեկ ըլլալ նոր հրատարակուած գործերու մասին: Ուրեմն թող զարմանալի չթուի այս քիչ մը ուշացած դրախտականը՝ այս դրախտուելիք մեծարժէք եւ կարեւոր գործի մասին:

Պալթրուսայիտիս նախարանին մէջ կը յայտնէ որ այս գործին ատաղձը հաւաքած է 1927 եւ 1928 տարիներուն ճամբորդութեան ընթացքին: Ես անձնապէս զինքը ճանչնալու պատիւը ունեցայ Փարիզ 1946ին այցելութեանս, չնորհիւ Փարիզարնակ ազնիւ բարեկամիս՝ Պր. Հայկ Պէրպէրեանի, որ հանդիպում մը կարգադրեց Պալթրուսայիտի տունը: Մեր այցելութիւնը եղաւ խիստ հաճելի, եւ ես յանձնու երջանիկ եմ այդ առիթին եւ ծանօթութեան համար:

Երիտասարդ դեռ, համեստ, գրեթէ շատ քաջուող հեղինակը եւ իր շնորհալի տիկինը, մարմնացումը ազնիւ ընդունելութեան, ոչ միայն մեզ երախտապարտ թողուցին իրենց հիւրամեծարութեամբ, այլ եւ Պալթրուսայիտի ցոյց տուաւ լուսանկարներու մեծ եւ ընտիր հաւաքածոյ մը՝ միջնադարեան զանազան հայ խաչքարերու եւ քանդակներու, որոնց մէջ մասնաւոր անյաղութեամբ մը դիտեցի հին Զուղայէն բերուած լուսանկարները: Քանիցս ես ալ ի գուր փորձեցի հին Զուղայ այցելել, լուսանկարելու համար

հոն դառնուող անթիւ եւ աննման խաչքարերը, կամ գոնէ յիշատակարաններ հաւաքելու համար: Կարծեմ միակ բախտաւորը Պալթրուսայիտիս եղած է ցարդ, որ թէեւ միմակ օրուան մը համար կրցեր է հրաման ստանալ Խորհրդային սահմանաւորը Պալթրուսայիտիս սահմանաւորէն՝ այդպէս ուժերու հրամանատարութենէն՝ այդպէս ցերեկ հին Զուղայ եւ լուսանկարել խաչքարեր: Կը պատմէ որ այդ առիթէն օգտուելով իրեն ընկերացեր է ողբացեալ Բրոֆ. Աշխարբէկ Քալանթար: Այսպէս տարիներ վերջ անակնկալ երջանկութիւնը կ'ունենայի Փարիզի մէջ այդ խաչքարերէն: Բաւական թիւով լուսանկարներ տեսնելու:

Պալթրուսայիտիս ներկայ գործը բաժնուած է քանի մը գլուխներու, որոնցմէ նուազինը նուիրուած է «հիւսկէնը Անդր-կովկասի մէջ»: Ուր հիւսկէնաձեւ զարդանկարներէն յարաբերութիւնը կը մշակուի դիտականապէս, ինչպէս նաեւ դժաւորական համեմատութիւններով: Անտագրական համեմատութիւններով միայն բաժնուած է իրականութեան հարցը: Հայ, Վրացի կամ Կովկասեան է որ այդ չի լմնար: Հետաքրքրական է որ մշակուած զարդարութեամբ շատ ընդհանուր կերպով գործածուած է իրականութեան Պալթրուսայիտի մէջ ալ: Բնական է Պալթրուսայիտի նպատակին մէջ չէ նիւթը այդ խիստ ընդարձակ ձեւով մշակել, եւ կեղերնաւորացած է որոշ շրջանի: Առիթ պիտի ըլլայ ինծի դարձեալ անդրադառնալու իր այս ուսումնասիրութեան՝ երբ այլուր մենագրութիւններ ունենամ հրատարակելու գորդարութեան եւ մանրանկարչութեան մէջ մեր այդ արուեստաձեւին գործածութեան մասին:

Ասոր կը յաջորդէ «Վրական զարդարանքներ» գլուխը, ուր ծաղկազարդ եւ տերեւազարդ նկատի կ'առնուին: Հոն կան եղակի նմանութիւններ հայ գորգի նաեւ հայ պղնձագործութեան զարդարութեան հետ՝ որոնց մասին կ'արժէ աւելի նիւթ հետ՝ որոնց մասին կ'արժէ աւելի նիւթ հետ: Յետոյ կու գայ «քանդակագործութեան մէջ», նախորդներուն նման յաստանի մէջ, նախորդներուն նման զարդաշխատ եւ մեծարժէք, ըլլալով անհատում աղբիւր մը ապագայ պրպտողին համար: Իսկ վերջին գլուխը ամբողջ մենագրութիւն մըն է՝ Վրական ճարտարապետական յատակագիծերու արուեստի մասին: Հոսակ կու գան նկարներու զոյգ ցանկեր, Կովկասի մէկ աշխարհացոյցը,

եւ արտահանուած նկարներու խիստ ընտիր շարքը, թուով 179 հատ, գրեթէ ամբողջութեամբ առաջին անգամ հոս որդուած:

Այս մեծարժէք եւ աննման գործը, պատրաստուած կարող հետախոյզ գիտնականէ մը, մեծ նպաստ է մեր ուսումնադիտական աղքատ դրականութեան, որուն մէջ ասոր նման մնայուն գործեր շատ հազուադիւս են:

Յ. ՔԻՐՈՍԵԱՆ

ՀԱՆԳՈՍ ՀՈԳՈՑ
ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ



Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Միաբանութիւնը խոր սուգով կը համակուէր 1946, Նոյեմբեր 19-ին անդարձ կորուստով իրենց վաստակաւոր անդամուհիներէն Մայր Թերեզա Յովնանեանի:

Մինչ հոս «Բագրևալէպ» ընթերցողներուն կը ներկայացնենք իր դէմքը՝ կ'ուզենք շեշտել որ նէ ոչ միայն վանական թաքուն շրջանակի մէջ ապրած կուտան մը՝ այլ նաեւ ազգային վարժարաններու մէջ որպէս դաստիարակ հայ աղջկանց՝ նկատելի դէմք մըն է: Նէ ամէն բանէ աղջկանց՝ նկատելի դէմք մըն է: Նէ ամէն բանէ միշտ իբրեւ ճշմարիտ մայր՝ իր ձեռքէն անցած անթիւ հայ ընտանիքներու աղջկաներուն՝ սորվեցնելով անոնց անկեղծ և բարեպաշտ կրօնական վարդապետութեան հետ՝ նաեւ ճշմարիտ